

Ժողովուրդ

64
(2730)

4 մայիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ +374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄՏԵԼ Է ՄԱՍ 178



Թեև Նիկո Փաշինյանը խոստանում էր, որ քաղաքացուն չի դարձնի տուգանքի «մատերիալ», բայց հենց այդպես էլ վարվում է:

2022 թվականի ընթացքում իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացված մուտքերի ծրագրային ցուցանիշը բարձրացել է 52.7% ու (6.7 մլրդ դրամով): Նախորդ տարվա համեմատ այն ավել է եղել 19.4%-ով (3.2 մլրդ դրամ): Աճը հիմնականում պայմանավորված է երթուղային բարձր ինտենսիվության պայմաններում ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով ՀՀ ոստիկանության կողմից հաճախակի ուժեղացված ծառայությունների իրականացմամբ եւ ՀՀ ոստիկանության տեսակարահանող սարքերի միջոցով արձանագրված խախտումների համար, ՀՀ ոստիկանության կողմից կիրառված պատժամիջոցներից գանձված գումարների աճով, որոնք կազմել են 15.7 մլրդ դրամ՝ 39.5%-ով (4.4 մլրդ դրամով) գերազանցելով ծրագրված ցուցանիշը եւ 9.5%-ով (1.4 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա ցուցանիշը: Այստեղ ուշագրավ է, որ փաստացի՝ Հայաստանի բյուջեում ավել եկամուտներ են եղել տուգանքների հետեւանքով, ու այդ գումարները մուծել են շարքային քաղաքացիները: Եվ այստեղ ուշարժանը կրկին այն խոստումներն են, որոնք Նիկո Փաշինյանը գալիս էր իշխանության: 2018 թվականի մայիսի 24-ին՝ կառավարության նիստի ժամանակ, Փաշինյանը հայտարարել էր. «Քաղաքացին, այսպես ասած, տուգանվելու, կներքե էս բառիս համար, մատերիալ չէ: Առավոտը տանից դուրս է գալիս, ասում ենք՝ «որտեղ բռնենք, տուգանելու ենք»: Ես փիլիսոփայությունը պետք է փոխվի, եւ դա չպետք է հակադրել ճանապարհային երթուղային անվտանգության ապահովման խնդիրներին»: Սակայն, փաստացի, այս հայտարարությունից հետո էլ քաղաքացիներին շարունակում են տուգանել:

Մինչ ԶՊ քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանը, քարոզարշավը դեռ չսկսված, առավոտից երեկո շրջում է Երևանի փողոցներում, լինում է վարչական շրջաններում, հանդիպումներ է ունենում քաղաքացիների հետ խորհրդարանական ընդդիմությունը դեռ մտորում է՝ մասնակցել ավագանու ընտրություններին, թե՛ ոչ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունն այս օրերին քննարկում է ավագանու առաջիկա ընտրություններին մասնակցելու հարցը: Ընդդիմադիր ֆրակցիային, սակայն, դեռ չի հաջողվում վերջնական որոշման գալ այս հարցում: Բանն այն է, որ ֆրակցիայում մեծամասնությունը հակված է ընտրություններին չմասնակցելու տարբերակին, քանի որ կարծում են՝ կրկնվելու է 2021թ.-ի ԱԺ արտահերթ ընտրությունների սցենարը. ինչպես այս դեպքում, ավագանու ընտրությունների դեպքում էլ, ում էլ առաջադրեն, ինչ էլ անեն՝ միեւնույնն է՝ իշխող մեծամասնությունն է հաղթելու՝ հաշվի առնելով վարչական ուժ լծակները կիրառելու նրանց հմտությունը. ինչը բազմիցս դրսևորվել է թե՛ համայնքային, թե՛ խորհրդարանական արտահերթ ընտրությունների ժամանակ: Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը մեկնաբանություն խնդրեց Լաւր Ազնեսա Խամոյանից, վերջինս էլ նշեց, որ ավագանու ընտրություններին մասնակցելու կամ թեկնածուի մասով դեռ որոշում չունեն:



«Ժողովուրդ» օրաթերթին է փոխանցվել «Голос Армени» թերթում իրապարակված մի հոդված, որը վերաբերում է ԱԺ ԶՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանին: Հիշեցնենք, որ նա 1994-1996 թվականներին եղել է Ապիտակի երկրաշարժի հետեւանքով արեւելի գոտու վերածված տարածաշրջանում Հայաստանի կառավարության արտակարգ լիազոր ներկայացուցիչը, եւ խայտառակ բացահայտումներ են արվում նրա գործունեության մասով: Մասնավորապես, մի դրվագ՝ Երևանից եկած հյուրերին դիմավորելու մասին: «Գյումրիում հայտնի մարդկանցից՝ Համբարձում եւ Հակոբ Մխիթարյան եղբայրներից առաջինը «Վան» համալիրի տնօրենն է, իսկ երկրորդը աշխատում է ռեստորանում: Երբ Քոչարյանն ու թիմը բնակություն հաստատեցին պանսիոնատում, Մխիթարյան եղբայրներն անգամ իրենց պարտքն էին համարում հյուրասիրել մայրաքաղաքից եկածներին, բայց հետո պարզվեց, որ նրանք պարզապես պարտավոր են դա անել: Ընդ որում՝ ծախսերը վճարել միայն ու միայն սեփական գրպանից: Բանը հասել է նրան, որ Մխիթարյան եղբայրները վճարում են ոչ միայն ջրի, էլեկտրականության, կոմունալ ծառայությունների համար, այլև իրենք են գնում օճառ, անձեռոցիկներ եւ, կներքե, զուգարանի թուղթ Անդրանիկ Քոչարյանի եւ իր հյուրերի համար»,- նշված է հոդվածում: Ծախսերի ընդհանուր գումարը կազմում է 2 միլիոն 200 հազար ռուսական ռուբլի: Քոչարյանը փոխհատուցել է ընդամենը 500 հազարը, որի արդյունքում Մխիթարյան եղբայրները սնանկացել են: → էջ 4



ՔՊ-ական պատգամավորը չի պատժվում սեռական բնույթի հայիոյանքներ ներկայացնելու համար, իսկ շարքային քաղաքացիները նույն արարքի համար պատժվում են: Բանն այն է, որ ապրիլի 15-ին Անահիտ Վիրաբյան անուն-ազգանունով մի կին օգտատեր հայտարարեց, որ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիվ Աղազարյանն իրեն սեռական բնույթի հայիոյանք է գրել «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում: Վիրաբյանն անպարկեշտ նամակը իրապարակել էր նաեւ սոցիալական ցանցի իր էջում: Եվ, չնայած պատգամավորը հայտարարեց, թե իր էջը կարծես թե կոտրել է, սակայն փաստերը իրապարակված էին, իսկ Աղազարյանը հայիոյելու համար այդպես էլ պատասխանատվության չի ենթարկվել մինչ օրս: Դրան զուգահեռ՝ «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է փաստեր, թե ինչպես են շարքային քաղաքացիները նույն կերպ հայիոյել ու խիստ պատասխանատվության ենթարկվել: Օրինակ՝ Գալուստ Զամանովի Նիկողոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մի իրապարակման «մեկնաբանություններ» բաժնում կատարել է անձի հանրային գործունեությամբ պայմանավորված՝ առերեսույթ ծանր վիրավորանք պարունակող իրապարակում, որով ՀՀ Վարչապետ Նիկո Փաշինյանին հասցրել է ծանր վիրավորանք: Իսկ Արտակ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2022թ.-ի փետրվարի 25-ին մի իրապարակման տակ մեկնաբանություն է գրել՝ դարձյալ հասցնելով ծանր վիրավորանք՝ Փաշինյանի հանրային գործունեությամբ պայմանավորված: Այսինքն՝ Նիկո Փաշինյանին հայիոյելը անխուսափելի պատժելի արարք է, իսկ երբ Նիկո Փաշինյանի թիմակիցն է հայիոյում ԶՊ խմբակցության պատգամավոր Հովիվ Աղազարյանը, մնում է անպատիժ: Իսկ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը երեկ երկար ճանքեր էր ասում ու արդարության բարձրաձայնումներ անում ԱԺ ամբիոնից:



ԹՇՆԱՄԱԿԱՆ ԱՐԱՐՔ

ՄԱԳՐԱՆՔ՝ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԿՈՂՄԻՑ

Ապրիլի 26-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 122 «կողմ» ձայներով բանաձև է ընդունել ՄԱԿ-ի և Եվրոպայի խորհրդի համագործակցության մասին, որտեղ հիշատակվում է նաև «Ուկրաինայի դեմ Ռուսաստանի ագրեսիան»:



Նի դաշնակիցներն են եղել: Նրանք կողմ են քվեարկել ընդհանուր նախագծին, վերջին պահին ՌԴ-ին վերաբերվող այդ կետը մտցվել է բանաձև, ստացվել է, որ Ռուսաստանին ագրեսոր ճանաչելուն են կողմ քվեարկում, իրականում այդպես չէ: Դրա համար էլ կարծում եմ, որ որեւէ հետևանք դա չի ունենալու:

մուտքի կողմից: ՌԴ-ն շատ լավ հասկանում է՝ 9-րդ կետը մտցվել է ընդհանուր բանաձևի մեջ՝ իրեն վնաս տալու համար, դրա համար էլ այն երկրները, որոնք կողմ են քվեարկել բանաձևին՝ առանց 9-րդ կետի, կողմ քվեարկած երկրներն էլ հայտարարել են, որ այդ կետին կողմ չեն: Ուստի բանաձևին կողմ քվեարկելը ՌԴ-ն չի դիտում որպես թշնամական արարք, և հետևանքներ, որպես այդպիսին, չեն լինի:

«Պարոն Բաղայան, ըստ Ձեզ՝ ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ ՄԱԿ-ում ՌԴ-ի դեմ Հայաստանի քվեարկությունը, արդյոք այն որեւէ կերպ կանդրադառնա՞ր հայ-ռուսական հարաբերությունների վրա:

«Դա ՄԱԿ-ի և Եվրասիայի համագործակցության մասին բանաձև է, որին շատ երկրներ կողմ են քվեարկել: Այստեղ մի խնդիր կա, որի վերաբերյալ ՄԱԿ-ում ՌԴ մշտական ներկայացուցիչը բացատրություն է տվել, որ ընդհանուր բանաձևը նորմալ է եղել, խնդրահարույց չի եղել, ուղղակի այդտեղ մի կետ են մտցրել, որտեղ նշված է, որ Ռուսաստանը ագրեսիա է իրականացրել Ուկրաինայի և Կրասնոդարի երկրամասի, իսկ այն երկրները, որոնք կողմ են քվեարկել, նշել են, որ ընդհանուր բանաձևին կողմ են քվեարկել, բայց կոնկրետ ՌԴ-ին վերաբերվող կետին կողմ չեն քվեարկել: Այնպես որ, միանշանակ չէ, որ հատուկ կողմ են քվեարկել բանաձևին՝ Ռուսաստանին ագրեսոր ճանաչելու համար: Հայաստանից բացի, հարյուրից ավել երկրներ կողմ են քվեարկել այդ բանաձևին՝ Բրազիլիան, Չինաստանը, Ղազախստանը, այսինքն՝ երկրներ, որոնք ՀԱՊԿ-ի կամ «Բրիքս»-ի ձեռագրված Ռուսաստանի

«Ըստ Ձեզ՝ Ռուսաստանն ինչպե՞ս կարծազանքի Հայաստանի այս քայլին:

«Ռուսաստանն էլ պաշտոնապես դիտարկում է, որ սա սադրանք էր Արե-

Ջրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄՏՈՐԱԳՐԱՐԱՎԱՔՆԵՐ՝ ԱՊՕՐԻՆԻ ԱՆՑԱԿԵՏԻ ՀԱՆՄԱՆ ՊԱՐԱՆՋՈՎ



ԼՈՒՐԵՐ ՓՈՐՉՈՒՄ Է ԱԶԱՏՎԵԼ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՑ

Լաչինում անցակետի տեղակայումից հետո Ադրբեջանը փորձում է ազատվել Դադիվանքի հայ հոգեւորականներից: Ադրբեջանի Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտեի նախագահ Մուբարիզ Գուրբանլին հայտարարել է, որ հայ հոգեւորականները պետք է լքեն Դադիվանքի վանական համալիրը:

րեց Արցախը Ադրբեջանի կազմի մեջ, բայց փուլ առ փուլ է տալիս, որ ժողովուրդը չբողոքի, ոտքի չկանգնի: Այսօր Նիկոլ Փաշինյանը անում է այնպես, որ մինչև վերջ Արցախը տա Ադրբեջանին և հանգստանա. այսօր 120,000 գտարյուն հայ ապրում է Արցախում և պատրաստ է Արցախը պաշտպանել մինչև վերջ», -ասում է նա:

«ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՉԻ ՓՈՒՄՎԵԼ»

Թուրքիան փակել է իր օդային տարածքը հայկական ավիաընկերությունների ինքնաթիռների համար, որոնք թռչում են Երրորդ երկրներ. նման հայտարարությամբ է հանդես եկել երկրի արտգործնախարար Մեւլուժ Չավուշօղլուն: Թուրք նախարարն օդային տարածքի փակումը բացատրել է Երեւանում «Նեմեսիս» գործողության հերոսների հուշարձանի բացմամբ: «Անհրաժեշտության դեպքում ինք-

նաթիռներ կթողնենք մեր երկիր, բայց թույլ չենք տա օդանավերի և մասնավոր ինքնաթիռների անցումը մեր տարածքով, քանի դեռ սադրանքները կան Հայաստանի կողմից Թուրքիայի և Ադրբեջանի դեմ: Եթե դրանք չդադարեցվեն, մենք այլ միջոցներ կձեռնարկենք»,- ասել է նա: ArmLur.am-ի հետ զրույցում թուրքազետ Ռուբեն Մելքոնյանն ասում է՝ նման անակնկալները Հայաստանի համար շարունակական կլինեն, Թուրքիան ամեն պահի կարող է փակել օդային սահմանը, հետագայում ավելի ագրեսիվ քայլերի գնալ: «Թուրքիան շարունակում է մնալ Հայաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված պետություն, և որեւէ դրական տեղեկացում հայ-թուրքական հարաբերություններում չկա: Թուրքիայի վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ չի փոխվել, միայն փոխվել է Հայաստանի դիմադրողականությունը, ՀՀ իշխանությունների մտածողությունն է անհիմն փոխվել Թուրքիայից բխող սպառնալիքների նկատմամբ», -ասում է Մելքոնյանը:

Աժ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանն այսօրվանից ստորագրահավաք է իրականացնում Բերձորում Ադրբեջանի կողմից ապօրինի տեղադրված անցակետը հանելու պահանջով:

Պատգամավորն իր ակցիայով նպատակ ունի աջակցություն հայտնել Արցախում ստորագրահավաք սկսած մեր հայրենակիցներին, ինչպես նաև միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել Ադրբեջանի կողմից Արցախում իրականացվող ապօրինությունների, ու նաև նրա կողմից վարվող ցեղասպան քաղաքականության վրա:

Բերձորում Ադրբեջանի կողմից ապօրինի տեղադրված անցակետը հանելու պահանջով ստորագրահավաքը կշարունակվի մի քանի օր՝ մինչև բավարար բանակով ստորագրություններ հավաքվեն:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՐՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՄԱԼ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ Է ԸՆԲԺՎՈՒՄ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ



«Ռուսաստանը շարունակում է հավատարիմ մնալ Հայաստանի, Ադրբեյջանի և Ռուսաստանի Դաշնության դեկլարացիաների՝ 2020-ից 2022 թվականներին ընդունված եռակողմ հայտարարությունների իրականացմանը»,- ամենշաբաթյա ճեպագրույցում հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

Անդրադառնալով Մոսկվայում Հայաստանի և Ադրբեյջանի ԱԳ նախարարների հանդիպման հեռանկարներին՝ Զախարովան հիշեցրել է, որ նախկինում արդեն խոսել է այդ մասին, հայտարարել հանդիպման մասին. «Երեւանն ու Բաքուն հաստատել են իրենց պատրաստակամությունը: Ժամկետների մասին կհայտարարվի ավելի ուշ»:

Բանակցություններն ընթանում են ոչ թե Ռուսաստանի, այլ ուրիշ երկրների մասնակցությամբ, համապատասխանաբար, գործընթացի մասին պետք է հետաքրքրվել անմիջական մասնակիցներից. այս մասին ամենշաբաթյա ճեպագրույցում ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ պատասխանելով ԱՄՆ-ի միջնորդությամբ Վաշինգտոնում Հայաստանի և Ադրբեյջանի ԱԳ նախարարների հանդիպումը մեկնաբանելու խնդրանքին:

«Ըստ արդյունքների՝ երբ համապատասխան հայտարարություններ արվեն, կողմերից յուրաքանչյուրը կարողանա հայտարարել կլինի տպավորություն ստեղծել, եւ, հնարավոր է, դա մեզ իրավունք կտա մեկնաբանելու: Դա կլինի ավելի ուշ»:

Հիշեցնենք, որ մայիսի 1-ին ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում տեղի է ունեցել Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի, ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի և Ադրբեյջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովի հանդիպումը: Հանդիպմանը քննարկվել են տարածաշրջանում անվտանգության իրավիճակին, Հայաստանի և Ադրբեյջանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացին վերաբերող հարցեր:


Անդրադարձ է կատարվել հումանիտար իրավիճակին, որը ստեղծվել է Ադրբեյջանի կողմից Լաչինի միջանցքի անօրինական շրջափակման հետևանքով: Ադրբեյջանական կողմն իր հայտարարությունում միայն արձանագրել է, որ քննարկվել են անվտանգության և Հայաստանի և Ադրբեյջանի միջև հարաբերությունների կարգավորմանը վերաբերող հարցեր:

Վաշինգտոնում Հայաստանի և Ադրբեյջանի արտգործնախարարների բանակցությունները կտեսնեն մի քանի օր:

Հայաստանում բնակվողների 52 տոկոսի կարծիքով՝ Հայաստանը բարձրագույն է սխալ ուղղությամբ, 26 տոկոսի կարծիքով՝ ճիշտ ուղղությամբ, 12 տոկոսը դժվարացել է դասասխանել: Հարցման այսպիսի արդյունքներ ստացվել են IRI-ի Միջազգային հանրադատական ինստիտուտի նախաձեռնած հետազոտության արդյունքում: Տվյալները հավաքվել են Հայաստանում հունվարից մինչև մարտ ընկած ժամանակահատվածում:

Քաղաքական գործիչներից ամենամեծ վստահությունը, ըստ այդ հարցման, վայելում է վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ հարցվածների 13 տոկոսի գնահատմամբ, 2-րդ տեղում՝ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն է, 2 տոկոսի վստահությունն է վայելում Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, 1 տոկոսի վստահությունը՝ «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, իսկ հարցվածների մեծ մասը՝ 64 տոկոսը, նշել է, որ որեւէ մեկին չի վստահում:

Որ քաղաքական կամ հասարակական գործիչն էք ամենից շատ վստահում, և ո՞վ է երկրորդ ամենավստահելին:



«Որ կուսակցությանը կամ դաշինքին կտայիք ձեր ձայնը, եթե խորհրդարանական ընտրություններն անցկացվեին հաջորդ կիրակի» հարցին 21 տոկոսը նշել է՝ «Քաղաքացիական պայմանագրին», 4 տոկոսը՝ «Հայաստան» դաշինքին, 3 տոկոսը՝ «Բարգավաճ Հայաստանին», իսկ 4-րդ տեղում «Հանրային ձայն» կուսակցությունն է, որի համահիմնադիրը «Դոգ» մականունով, հայիոյախառն յուբոյեյան


ԼՈՒՐԵՐ ԳԻՏՈՐԳԱԿԱՆ ԱՆԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 30-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պատվիրակությունը Ուզբեկստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավերով դիտորդական առաքելությամբ մասնակցել է սահմանադրական հանրաքվեին: Պատվիրակության կազմում ընդգրկվել են ՀՀ ԿԸՀ նախագահի խորհրդական Արեւիկ Նավոյանը և ԿԸՀ աշխատակազմի գլխավոր քարտուղար Գեորգ Պետրոսյանը:

ՀՀ ԿԸՀ պատվիրակությունը քվեարկության նախորդ օրն այցելել է մայրաքաղաք Տաշքենդում ձեւավորված թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողով, որտեղ մանրամասն ծանոթացել է ընտրությունների կազմակերպման և անցկացման նախատարատասական աշխատանքներին, ներկայացրել է ՀՀ-ում կիրառվող էլեկտրոնային եղանակով ընտրո-

ւթերներով հայտնի Վարդան Ղուկասյանն է՝ ոստիկանության նախկին աշխատակից: Ընդ որում, վերջինի՝ 2021 թվականի ընտրություններում ԹԳ-ն ստացել էր ձայների 53 տոկոսը, «Հայաստան» դաշինքը՝ 21%:

Որ կուսակցությանը կամ դաշինքին կտայիք ձեր ձայնը, եթե խորհրդարանական ընտրությունները անցկացվեին հաջորդ կիրակի:




Ի՞նչ ակնկալիքներ ունեն հարցման մասնակիցները Կառավարությունից: 12 տոկոսը համարում է, որ Կառավարությունը պետք է բարելավի բանակային պայմանները, ուշադրության կենտրոնում պահի ազգային անվտանգության հարցերը ու պահպանի սահմանները: 9 տոկոսի համար առաջնային է խաղաղության հաստատումը: Մարդկանց եւս 9 տոկոսն իշխանություններից ակնկալում է Լաչինի միջանցքի բացում, միեւնույն ժամանակ Լաչինի միջանցքի փակ լինելը հարցվածների մեծ մասը համարել է Կառավարության ամենամեծ ձախողումը:

Արտաքին քաղաքականության մասին հարցվածների 63 տոկոսը հարաբերությունները շատ լավ է գնահատում Ֆրանսիայի հետ, 2-րդ տեղում Իրանն է, ապա ԱՄՆ-ն և ԵՄ-ն, իսկ Ռուսաստանի հետ հարաբերությունները շատ լավ է գնահատում միայն հարցվածների 10 տոկոսը: 49 տոկոսի կարծիքով՝ Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանի հետ հարաբերությունները շատ վատ կամ որոշ չափով վատ են: Մյուս կողմից՝ հարցվածների 50 տոկոսը կարծում է, որ Ռուսաստանը Հայաստանի համար կարելու

քաղաքական գործընկեր է, սակայն Ռուսաստանից կարելու համարվել են Ֆրանսիան, Իրանն ու Միացյալ Նահանգները:


Ֆրանսիայ երկրներից որո՞նք եք համարում առավել կարևոր քաղաքական գործընկերներ Հայաստանի համար:



Որ երկրներն են ներկայացնում քաղաքական սպառնալիք Հայաստանի համար. առաջին տեղում Ադրբեյջանն է, ապա՝ Թուրքիան, իսկ 3-րդ տեղում, հարցվածների 24 տոկոսի կարծիքով, Ռուսաստանն է:

Ի՞նչ խնդիրներ պետք է լուծի Երեւանի նոր քաղաքապետը. ըստ հարցվածների մեծամասնության՝ առաջնային խնդիրը տրանսպորտի հարցն է, ապա՝ աղբահանության ու կանաչապատման:

Որո՞նք են երեք կարևորագույն խնդիրները, որոնք պետք է լուծի երևանի նոր քաղաքապետը:



Քայսերիում լրագրողների հետ զրույցում ասել է Թուրքիայի ազգային պաշտպանության նախարար Հուլուսի Աքարը:

Նա նշել է, որ Անկարան շարունակում է ջանքեր գործադրել Ուկրաինայում պատերազմի հետ կապված պարենային ճգնաժամի ռիսկը վերացնելու ուղղությամբ:

«Երկու հանդիպումների ընթացքում էլ քննարկվել է հացահատիկային միջանցքի թեման: Կողմերը հավանություն են տվել մայիսի 5-ին Ստամբուլում այդ հարցով պաշտպանության փոխնախարարների մակարդակով հանդիպում անցկացնելու թուրքական կողմի առաջարկին: Նախատեսվում է քննարկել նաեւ մի շարք այլ հարցեր: Հուսով ենք, որ համաձայնագիրը կերկարաձգվի առանց որեւէ ձգձգման, քանի որ այդ գործարքը կարելու է ոչ միայն տարածաշրջանում խաղաղության և կայունության համար, այլև կարիքավոր երկրների պարենային կարիքները իրագրելու տեսանկյունից», - ասել է Աքարը:

«ՀԱՅԱՐԱՏԻԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔ»

Մայիսի 5-ին Ստամբուլում նախատեսված է «հացահատիկային գործարքի» ժամկետների երկարաձգման հարցով հանդիպում Թուրքիայի, Ռուսաստանի և Ուկրաինայի պաշտպանության փոխնախարարների մակարդակով: Այս մասին

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԵԾ ԾԱԽՍԵՐ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Տավուշի մարզպետարանը մարզի ընդամենը երկու ոլորտ՝ մարզի հանրակրթական դպրոցները և մարզի պետական առողջապահական հիմնարկներն է դեկավարում, այն էլ՝ ԿԳՄՍ և Առողջապահության նախարարությունների հետ համատեղ: Տավուշի մարզպետարանը 74 աշխատողներ, նաեւ թափուր հաստիքներ ունի, մարզպետարանի պահպանման, աշխատանքային գործունեությունն ապահովելու համար պետական բյուջեից գրեթե երեք տասնամյակ մեծ ծախսեր են արվում: Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ 2023 թվականին Տավուշի մարզպետարանին կհատկացվի ընդհանուր 545 միլիոն 640 հազար 600 դրամ: Այդ գումարի մեծ մասը՝ 379 միլիոն 404 հազար դրամը, կազմում է մարզպետարանի աշխատողների աշխատավարձերն ու հավելավճարները: Մարզպետարանի աշխատողների պարգևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար 2023 թվականին նախատեսված է 48 միլիոն 121 հազար 800 դրամ, քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարների համար՝ 24 միլիոն 47 հազար 400 դրամ: Մարզպետարանի տարեկան ծախսերի մեջ առանձին տողերով նշված են մարզպետարանի էներգետիկ, կոմունալ ծառայությունները, ներքին գործուղումները, համակարգչային ծառայությունները, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունները, տեղեկատվական, կառավարչական և այլ ծախսեր: Մարզի սոցիալապես անապահով, բուժման կարիք ունեցող բնակիչներին պետական բյուջեից աջակցելու համար, որպես սոցիալական օգնության դրամական արտահայտության մասնատների գումար, ընթացիկ տարվա ընթացքում նախատեսված է հատկացնել 80 միլիոն դրամ:

ԱՆՈՐՈՇ ՊԱՏԱՄԻՆՆ

Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցների շենքերից 24-ը ձմռանը ջեռուցվում է փայտ վառող վառարաններով: Դա խնդիրներ է ստեղծում այդ դպրոցների համար անտառից վառելիքայտ տեղափոխելու, այն տեղափոխելու, վառելիքայտը մակրոցնելու, առավել անվտանգ միջոցով դասերը սկսելը վառարանները վառելու, դասերի ավարտից հետո մոխիրը վառարաններից հանելու, տեղափոխելու և այլ առումներով: Պատահում է, որ դրսում ուժեղ քամի է լինում, վառարանի ծովից, ծխատար խողովակից ետ մղվելով, լցվում է դասարանը՝ խանգարելով դասապրոցները, սեռացնելով դասարանների պատերը: Տավուշի մարզպետ Յայլ Դալումյանին տեղեկատվական հարցում են ուղարկել՝ հարցնելով, թե առաջիկայում ինչ միջոցներ են ձեռնարկվում մարզի 24 հանրակրթական դպրոցներում արդիական ջեռուցման համակարգեր տեղադրելու համար: Մարզպետարանից ստացվել է անորոշ պատասխան. այնտեղ նշված է. «Ջեռուցման համակարգեր անցկացնելու խնդիրը քննարկման փուլում է, այս պահի դրությամբ դեռ որոշված չէ, թե որ դպրոցներում են դրանք անցկացվելու»:

ՈՍԿԻՆ ՄԱՐԶԱՅԱՆ Տավուշ

ԻՆՉ Է ՓՈԽՎԵԼ

ԱՐՁԱԿՈՒՐԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Երեկ խորհրդարանը երկրորդ ընթացքում է ամբողջությամբ 81 կողմ և 0 դեմ ձայնով ընդունեց Աշխատանքային օրենսգրքի փոփոխությունները: Իսկ ի՞նչ է սղասվում այս փոփոխությունների արդյունքում: ArmLur.am-ը ներկայացնում է կեսերով՝

- գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերից հանվել է կենսաթոշակային տարիքը լրանալը:
- Կրճատվել են մինչև 18 տարեկան անձանց աշխատաժամանակի տեղադրությունները, միաժամանակ սահմանվել է, որ մինչև 18 տարեկան անձինք կարող են աշխատել միայն պարտադիր կրթության համար սահմանված ժամերից դուրս:
- Ընդլայնվել են երեխա ունեցող աշխատողների իրավունքները (1. հնարավորություն է տրվում ոչ թե մինչև մեկ տարեկան երեխա խնամող աշխատողին իրավունք տալ նվազեցնելու իր աշխատաժամանակը, այլ նաեւ մինչև երկու, 2. սահմանվել են, իրենց կարգավիճակով պայմանավորված, կանանց տրամադրվող ընդմիջումների օգտագործման ճկուն մեխանիզմներ):
- Վերանայվել են արձակուրդի կարգավորումները՝
 - եթե աշխատողը երկուսուկես տարի անընդմեջ խուսափում կամ հրաժարվում է իրեն հասանելիք ամենամյա արձակուրդից, ապա գործատուն այն տրամադրում է առանց աշխատողի դիմումի,
 - նախատեսվել է օրենսգրքով սահմանված ժամկետներում ամենամյա արձակուրդը աշխատողին չտրամադրելու դեպքում գործատուի կողմից աշխատողին տուժանք վճարելու կարգավորում,
 - ամրագրվել է, որ կողմերի համաձայնությամբ ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել նաեւ մինչև աշխատողի տվյալ գործատուի մոտ անընդհատ աշխատանքի 6 ամիսը լրանալը,
 - մինչև 2 տարի ժամկետով ուսումնական արձակուրդ ձեւակերպելու հնարավորություն է տրվում՝ աշխատատեղը պահպանելով:
 - Աշխատանքային պայմանագրում նախատեսվում է պարտադիր ներառել



նաեւ գործատուի և աշխատողի կողմից միմյանց ծանուցելու եղանակները:

- Նախատեսվել է փորձնակության (internship) ինստիտուտը, որը կնպաստի ուսումնական հաստատություններում սովորող կամ այդ հաստատությունները նոր ավարտած (ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում) անձանց աշխատանքային փորձառություն ձեռք բերելուն:
- Գործատուին հնարավորություն է տրվում նաեւ արտաժամյա աշխատանքի ներգրավել առանց բացառիկ դեպքերի առկայության, եթե աշխատողը տվել է իր գրավոր համաձայնությունը:
- Հստակեցվում են վերջնահաշվարկ չկատարելու դեպքերը:
- Վերանայվել են ընդմիջումների տրամադրման կարգավորումները:

● Սահմանվել է, որ աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել նաեւ փոստային եղանակով կամ էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով՝ այն կողմերի միջեւ փոխանակելով:

- Նախատեսվում է չաշխատած օրերի համար վճարված գումարի (երբ աշխատողին տրամադրվել է արձակուրդ չաշխատած ժամանակահատվածի համար եւս) գանձում կատարել նաեւ այն դեպքերում, երբ աշխատողն ազատվում է աշխատանքից որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում, ինչպես նաեւ կողմերի համաձայնությամբ:

Փոփոխությունների մեծ մասն ուժի մեջ կմտնի երկու ամսից:
ՆԱԽՈՒ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

ՊԱՏԱՄԱՋ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԸՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԵԼ Է

2022 թվականին Հայաստանում թմրամիջոցների ապօրինի ցրման առաջնությունը արձանագրված դեղերի թիվն աճել է 743-ով կամ 76.3%-ով՝ կազմելով 1717: 2021 թվականի 974-ի դիմաց: Այս մասին երեկ մայիսի 3-ին, ԱԺ-ում դասախոսության 2022 թվականի գործունեության մասին հաղորդումը ներկայացրեցին Գևորգյանը:

կայն այն վկայում է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) և ածանցյալների աճող տարածվածության մասին և արտացոլում է հասարակական կյանքում առկա խիստ բացասական իրողությունները»,-ասաց նա:

Դատախազի խոսքով՝ նշված ցուցանիշները կարող են մասամբ պատճառաբանվել քրեադատավարական օրենսդրության փոփոխությամբ կամ իրավակիրառ պրակտիկայում, նույնիսկ բուսական ծագման մանր չափի թմրամիջոցի հայտնաբերման դեպքում քրեական վարույթներ նախաձեռնելու մոտեցմամբ, սակայն վիճակագրական տվյալներն առավելապես վկայություն են թմրամիջոցների և թմրամիջոցների ապօրինի շրջանառության տարածվածության, նշված հակասոցիալական և

հակաիրավական երեւույթներում մեծ թվով անձանց ներգրավվածության:

2022 թվականի ընթացքում, 2021 թվականի համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների 354 դեպքով կամ 34.2%-ով աճ (2021 թվականին՝ 1034, 2022 թվականին՝ 1388): Բացահայտման ցուցանիշը նվազել է՝ կազմելով 12.5%՝ 2021 թվականի 23%-ի դիմաց:

«2022 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է նաեւ պետական իշխանության, պետական ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների 563 դեպքով կամ 20.2%-ով աճ (2021 թվականին՝ 2794, 2022 թվականին՝ 3357)»,- ասաց նա:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ճՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԳԵՆԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը նախնական ուսումնասիրություն է իրականացրել հեղուկ գազի շուկայում...

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ շուկան խիստ մրցակցային է, հեղուկ գազի ներմուծում են իրականացնում 86 տնտեսավարող սուբյեկտներ...

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԲԵՌ

ԼՂ հակամարտության գոտում վերջին մեկ օրվա ընթացքում ռուսական խաղաղապահ զորակազմը շարունակում է առաջադրանքներ իրականացնել...

Բուսական խաղաղապահ զորակազմի մեքենաներով Ստեփանակերտ է հասցվել 223 տոննա մարդասիրական բեռ:

Նշվում է, որ «Մենք միասնական ենք» բազմաֆունկցիոնալ հիմնադրամի հետ համատեղ մարդասիրական ակցիա է իրականացվել Ստեփանակերտի դպրոցականներին սննդի փաթեթներ բաժանելու նպատակով:

ՊԵԿ-Ը ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2017թ. մարտի 17-ի թիվ 22/17 «ԵԱՏՄ անդամ պետության տարածք ներմուծված եւ ազատ շրջանառության (բաց թողում ներքին սպառման համար) ընթացակարգով բաց թողված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալների էլեկտրոնային տրամադրման տեխնոլոգիայում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ» որոշման համաձայն՝ Պետական եկամուտների կոմիտեն Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցում է մյուս անդամ երկրների մաքսային ծառայություններին, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության դաշնային մաքսային ծառայությանը:

ՊԵԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի փոխանցմամբ՝ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջի «Էլեկտրոնային ծառայություններ» բաժնում առկա է տրանսպորտային միջոցների՝ ԵԱՏՄ տարածքում տեղափոխման հետ կապված պարզաբանում հայերեն եւ ռուսերեն լեզուներով

ՕՐԵՆՔՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԿԱՆԻ

ArmLur.am-ը սեղեկացավ, որ ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշակման հանձնաժողովը մայիսի 10-ին՝ ժամը 11:00-ին, Ազգային ժողովի նիստերի դահլիճում հրավիրում է խորհրդարանական լսումներ «Կամավոր աշխատանքի մասին» եւ հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Այս նախագիծը ներկայացվել է խորհրդարան, սակայն վերջնական քննարկումից առաջ խորհրդարանական լսումներ են կազմակերպվում: Այս օրենսգրքում ներկայացված են կամավորների իրավունքներն ու պարտականությունները: Կամավորի իրավունքները

1. Կամավորն իրավունք ունի՝
 - 1) կազմակերպությունից ստանալու կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ տեղեկատվություն, խորհրդատվություն կամ աջակցություն,
 - 2) կազմակերպության հետ փոխադարձ համաձայնությամբ մասնակցելու կազմակերպության կամավորական կամ այլ ծրագրերի մշակմանը կամ իրականացմանը,
 - 3) սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում եւ կարգով կազմակերպությունից ստանալու կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ միջոցներ, իր կատարած կամավոր աշխատանքից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցում, ինչպես նաեւ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում եւ կարգով՝ ծախսերի հատուցում,
 - 4) ստանալու վնասի հատուցում,
 - 5) մասնակցելու կազմակերպության կազմակերպած կրթական ծրագրերին կամ իրազեկման այլ միջոցառումներին,
 - 6) կազմակերպությունից ստանալու իր կատարած կամավոր աշխատանքի մասին տեղեկանք կամ երաշխավորագիր՝ կազմակերպությանը գրավոր դիմելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում,
 - 7) կամավոր աշխատանքի մասին պայմանագրով նախատեսված դեպքերում եւ կարգով ունենալու կամավոր աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերից ապահովագրություն,



8) ունենալու սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավոր աշխատանքի հետ կապված այլ իրավունքներ: Կամավորի պարտականությունները

1. Կամավորը պարտավոր է՝
 - 1) չտարածել կամ չհրատարակել կամավոր աշխատանքը կատարելու ընթացքում իրեն հայտնի դարձած անձնական տվյալների կամ պետական, բանկային, ապահովագրական, առեւտրային, բժշկական, փաստաբանական կամ օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող այլ տեղեկությունները,
 - 2) կամավոր աշխատանքը կատարել՝ առողջության պահպանման եւ անվտանգության ապահովման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան,
 - 3) հատուցել սույն հոդվածով սահմանված պարտականությունները կատարելիս իր գործողության կամ անգործության հետեւանքով կազմակերպությանը պատճառած նյութական վնասը,
 - 4) նպատակային ու բարեխղճորեն օգտագործել կազմակերպության հատկացրած միջոցները,

5) մասնակցել կազմակերպության կազմակերպած՝ իր կամավոր աշխատանքին առնչվող կրթական ծրագրերին կամ իրազեկման այլ միջոցառումներին տվյալ կամավոր աշխատանքը կատարելու համար պարտադիր նախապայման լինելու դեպքում,

- 6) կրել սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված՝ կամավոր աշխատանքի հետ կապված այլ պարտականություններ:
 2. Անձը կամավոր դառնալուց առաջ պարտավոր է՝
 - 1) կազմակերպության հետ սույն օրենքով սահմանված կարգով կնքել կամավոր աշխատանքի մասին պայմանագիր,
 - 2) կազմակերպությանը ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող համապատասխան լիցենզիա կամ կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին փաստաթուղթ, եթե կամավոր աշխատանքը կատարվելու է հատուկ (սեղ մասնագիտական) գիտելիքներ պահանջող բնագավառում:

ՆԱԽՈՎ ՀՈԿՅԱՆՆԻՍԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՊՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՈՒԹՅՈՒՆ «Ֆլորես» Աճուրդի Տուն՝ ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այսուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Հակոբ Արմենի Ջորջեսի գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- Կոտայքի մարզ, համայնք Արմյան, գյուղ Արինջ, Պ. Սեւակի թաղամասի 13-րդ փողոց, 2 հասցեում գտնվող 184,6 ք.մ. բնակելի տուն, 0,6 ք.մ. /1,5 խ.մ./ պարիսպ, 0,4 ք.մ. /0,48 խ.մ./ պարիսպ է 0,01746 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 65300000 ՀՀ դրամ: Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավարված է: Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 22.05.2023թ. ժ.12:00-ին դասական եղանակով, այսուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճար սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՍ ՍՊԸ-ի դրամարկում աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկ շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը երեսնակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը: Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրատարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայքը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՊԱՏՄԱՍՆՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕԲՅԵԿՏ

ՆՈՐԱՐՁԱՅՑ ՀՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՆ ՄՏԱՑԵԼ

ArmLur.am-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի սեղեկագրության վարչությունից սեղեկագրավ, որ նորահայտ հուշարձանի կարգավիճակ են ստացել հինգ դասամակարային օբյեկտներ:

Տեղի է ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարության փորձագիտական հանձնաժողովի ընթացիկ տարվա երկրորդ նիստը: Նիստին քննարկվել է մի շարք պատմամշակութային օբյեկտներին նորահայտ հուշարձանի կարգավիճակ տալու հարցը: Քննարկումների արդյունքում հանձնաժողովի անդամների դրական եզրակացությամբ նորահայտ հուշարձանի կարգավիճակ են ստացել հինգ պատմամշակութային օբյեկտներ: Նորահայտ հուշարձանի կարգավիճակ է տրվել Երեւան քաղաքի «Կենտրոն» վարչական շրջանում գտնվող ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի շենքին (1950-ական թթ.), որը կառուցվել է 1950-ական թթ. որպես վարչական շենք: Այստեղ տեղակայվել է ՀԽՍՀ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը: 1973 թ. տրամադրվել է ՀԽՍՀ ԳԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտին: Հաջորդը Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղի «ԽԱԶԶԱՐ» (1309 թ.) քարակոթողն է, որը նախկինում եղել է վիշապաբար եւ, ըստ խաչքարի հորինվածքի մաս կազմող ծավալուն թվակիր արձանագրության, խաչքարացվել է 1309 թ., տեղահանված է եւ ընկած: Խաչքարի հորինվածքի կենտրոնում հիմնախաչն է, իսկ խաչաթելերի միջակայքում առկա են մեկական փոքր խաչեր, որոնք նվիրված են ընտանիքի առանձին հանգուցյալ անդամներին: Առանձին փոքր, փորագիր խաչեր պատկերված են հորինվածքի չորս անկյուններում եւ հիմնախաչի տակ:

Նշենք որ, Հայաստանում խաչքարացված վիշապաբարեր փաստագրվել են նաեւ Գեղամա լեռներում (Աժդահա յուրտ), Սառնաղբյուրում (Շիրակի մարզ), Գառնիում (Կոտայքի մարզ), Վայոց ձորի մարզի Ռինդ, Կարմրաշեն, Թառաթունք գյուղերում եւ այլուր: Որպես խաչքարային



արվեստի ինքնատիպ օրինակ՝ արժեւորվել է Սյունիքի մարզի Խոտ գյուղի «Ուլան-Նեսի խաչքար»-ը (XV-XVI դդ.): Այն մոխրագույն բազալտե ուղղանկյուն սալ է, որի դիմալին հարթության վրա կամարածե վերնամասով խորադիր խորշում քանդակված է երկճյուղ թելերը հյուսկեն, եռաբողբոջ զարդերով հարդարած հիմնախաչ: Խաչաթելերի վերնամասում խաղողի ողկոյզներ են, իսկ ներքեւում մեկական փոքր խաչաքանդակներ: Նույն գյուղի «Մուրատ Ակոբճանի» արձանագիր տապանաքարը (1552 թ.) նույնպես ստացել է նորահայտ հուշարձանի կարգավիճակ: Վերջինս սրբատաշ բազալտե ուղղանկյուն սալ է, որի աջ կողմին հարթության վրա պահպանվել է երկու տող արձանագրություն. «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՆՈՅ ԶՅՈՒՎԻ ՈՐՈՒՊ ԴԷՅ ՄՈՒՐԱՏ ԱԿՈԲՃԱՆԻՆ ԹՎ ՌԱ (1552)»: Նորահայտ հուշարձանի կարգավիճակ է տրվել նաեւ Կո-

տայքի մարզի Պողոսի գյուղի «ՀՆՁԱՆ» (XII-XIV դդ.) նոր հայտնաբերված պատմամշակութային օբյեկտին, որի ուղղաձիգ կտրվածքը պատահականորեն բացվել էր 2022թ.՝ հողաբաժանման աշխատանքների ժամանակ: Քննարկվել են նաեւ ՀՀ տարբեր մարզերում գտնվող պատմության եւ մշակույթի անշարժ 28 հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը, որոնք, ըստ սահմանված կարգի, կուղարկվեն համայնքների ղեկավարների եւ տարածքային կառավարման պետական մարմինների համաձայնեցմանը: Ներկայացվել է հանձնաժողովի անդամների հավանությանն է արժանացել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր բնակավայրի ԱՄՐՈՑ «Քյոշկ», Բ. ա. V դ. - Բ. հ. VII դ., XVII դդ. (պետ. ցուցիչ՝ 9.1.2) (Հ) հուշարձանը զբոսաշրջային ենթակառուցվածքներով ապահովելու ծրագիրը: **ԼԻՂԱ ԵՐԻԱԶՈՐՅԱՆ**

ԼՈՒՐԵՐ

«ԵՍ ԶԳԻՏԵՄ ԻՐԱԿԱՆ Է, ԹԵ ՈՉ»

Նիկոլաս Քեյջը պնդում է, որ իր առաջին հիշողությունը ծեւալորվել է դեռեւս ծնվելուց առաջ՝ մոր արգանդում: Այս մասին հայտնի դերասանը կիսվել է Սթիվեն Կոլբերտի շոուի ժամանակ:

«Ես չգիտեմ՝ դա իրական է, թե ոչ, բայց երբեմն մտածում եմ, որ կարող եմ վերադառնալ արգանդ եւ զգալ, որ մթության մեջ դեմքեր եմ տեսնում կամ նման բան», - ասել է Քեյջը: «Ես գիտեմ, որ դա շատ վերացական է հնչում, բայց ինչ-որ կերպ թվում է, որ դա եղել է»:

Հարցին, թե արդյոք այդ դեմքերը իսկապես նրա հետ են եղել արգանդում, թե նա կարծում է, որ դրանք ինչ-որ բան են ստեղծել իր նախածննդյան ուղեղի կողմից, դերասանը նշել է, որ «գուցե դա ծայրի թրթռանք էին, որոնք ռեզոնանսվում էին ինձ հետ այդ փուլում»: «Ես նույնիսկ չգիտեմ, թե արդյոք հիշում եմ ինձ մորս արգանդում, բայց այս միտքը եկավ իմ գլխում»:

Աստղը հայտնի է իր էքսցենտրիկությունը ցուցադրելով եւ իր հետաքրքիր տեսությունների ու կյանքի փորձի մասին բաց խոսելով: Քեյջը նախկինում պատմել է այն մասին, թե ինչպես է մանուկ հասակում համոզված եղել, որ այլմոլորակային է: «Ես շուկի մեջ էի այն օրը, երբ մանուկ հասակում գնացի բժշկի եւ պարզեցի, որ ունեմ նորմալ օրգաններ ու նորմալ կմախք, քանի որ վստահ էի, որ այլ մոլորակից եմ», - ասաց նա Rampstyle ամսագրին:

ՆՈՐ ՄՈՒԳԵԼ

52-ամյա գրող, ակտիվիստ, դերասանուհի, բարերար եւ հեռուստահաղորդավարուհի Պաղմա Լակշմին դարձել է Sports Illustrated Swimsuit Issue-ի մոդել:

«Jimmy Kimmel Live!»-ի վերջին դրվագում նա խոստովանել է, որ «խելագարվել», երբ ստացել է առաջարկը: «Ես կսպանեի դրա համար, երբ 20 տարեկան էի եւ մոդել էի, քանի որ դա սուրբ Գրալն է»:

Նրա խոսքով՝ առաջարկը ստանալուց հետո չի կարողացել հավատալ ականջներին, իսկ հետո խելագարվել է ու շտապել մարզասրահ: Նա նաեւ խոստովանել է, որ իր՝ «Լավագույն խոհարարը» շոուի նկարահանումների ժամանակ ստիպված է եղել ավելի ինտենսիվ քրտնել եւ ավելի ինտենսիվ մարզվել չափից շատ ուտելու պատճառով:

Նորածնության լուսանկարիչ Յու Ցայն այս թողարկման համար կատարի կարգեր է նկարահանել, որոնցում Լակշմին կեցվածք է ընդունել լողագետներով: Sports Illustrated Swimsuit Issue-ի գլխավոր խմբագիր Մջեյ Դեյը բացատրել է, թե ինչու է ընկերությունը 2023 թվականի շապիկի համար ընտրել հնդկաստերիկյան գեղեցկուհի:

«Պաղմայի այստեղ գտնվելու կարեւորությունը բազմակողմանի է: Նա այստեղ է, քանի որ նա իրեն ավելի լավ է զգում, քան երբեք, ինչպես ներքուստ, այնպես էլ արտաքուստ», - ասվում է Դեյի հայտարարության մեջ:

ԱՐԶԱԳԱՆՔ

Հ. ՄԱԼՅԱՆԻ ԹԱՏԻՐՈՆԸ ԿՓԱԿՎԻ՞

Քիչ առաջ ArmLur.am-ը գրել էր, որ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն այս անգամ էլ որոշել է նախարարության օտսիմալացման ծրագրի օրգանակներում փակել Հենրիկ Մալյանի անվան կինոդերասանի քառորդը:

Այս անչությունը ArmLur.am-ը դիմեց ԿԳՄՍ նախարարության հասարակայնության եւ տեղեկատվության կապերի վարչություն, որտեղից հայտնեցին, որ այս պահին ԿԳՄՍ նախարարությունում նման նախագիծ չի շրջանառվում: Ավելի վաղ ArmLur.am-ը խոսեց Հենրիկ Մալյանի անվան կինոդերասանի թատրոնի տնօրեն Վարդուհի Ռուշանյանի հետ, որը մեզ հետ զրույցում ասաց, որ ԿԳՄՍ նախարարությունից նման ծրագրի մասին իրենց չեն հայտնել: Վարդուհի Ռուշանյանի խոսքով՝ թատրոնի շուրջ տարատեսակ լուրեր լսել են, բայց հստակ տեղեկություններ չունեն: **Լ. ԵՐԻԱԶՈՐՅԱՆ**



● Մայիսի 5-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Սերը տարիք չի հարցնում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՕՐԵՆՔ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանվում է արդյո՞ք գրավանքների վրա:

Ռուբինա Հարությունյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ռ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Դրամարկղային գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրավաբանական անձանց, Ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերի, պետական եւ այլ հիմնարկների, դրանց՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), օտարերկրյա կազմակերպությունների՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) (այսուհետ՝ կազմակերպություններ) վրա:

Այն չի տարածվում բանկերի եւ դրանց առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), արտարժույթի առջ ու վաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, վարկային կազմակերպությունների վրա:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՎՈՐԳ». «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սահմանափակումները չեն տարածվում ֆիզիկական անձանց կողմից կատարվող, նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող վճարումների վրա: Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանվում են հետևյալ սահմանափակումները. ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը 300000 դրամ է:

ԿՎՐԳ

ՀԱՐՑ. Պե՞տական գրանցում կատարելու եւ վկայական սահմանում համար ու՞րքա՞ն գումար դե՞ս է վճարել, եթե բնակելի տունը մինչ այդ Հայաստանի կադաստրի տեղական կոմիտեում տեղական գրանցում չի անցել:

Ստեփան Հովհաննիսյան (41 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող բնակելի նշանակության անշարժ գույքի (բացառությամբ՝ առանձին միավոր հանդիսացող ավտոտնակների) եւ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքները կատարվում են անվճար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Այսինքն՝ եթե բնակարանը, առանձնատունը կամ այգետնակը 1998 թվականի մարտի 1-ից հետո չի գրանցվել, ապա հնարավոր է առանց որեւէ գումար վճարելու այն սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման եւ ստանալ սեփականության իրավունքի գրանցման վկայական:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՎՈՐԳ». Պետական գրանցման դիմումը եւ այդ դիմումին կից ներկայացման ենթակա փաստաթղթերը կարող են ներկայացվել (ներբեռնվել) նաեւ էլեկտրոնային եղանակով Հայաստանի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգի միջոցով, որի դեպքում դիմումը եւ ներկայացվող փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների համապատասխանությունը դրանց իսկական օրինակներին հավաստվում է ներկայացնող անձի էլեկտրոնային ստորագրությամբ:

ԼՈՒՐ ԿԱՂԻ

Լուսանկարն արվել է Երեւանում



ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս գիշեր թալանել են Նոր Նորքի չորրորդ զանգվածում գտնվող, թերթեր, ամսագրեր վաճառող կրպակներից մեկը: Մեր թղթակիցն ականատես է եղել, թե ինչպես է կրպակի աշխատակիցը փորձում հավաքել դրսում թափված իրերը: Կրպակի հետեւի մասն էր վնասված, որտեղից էլ ենթադրյալ գողը ներս է մտել տարածք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

2011
ժողովուրդ 1
www.armLur.am

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



☀	Շիրակ	- 1 - 5 +11 + 16	☀	Արարատ	+ 5 + 7 +20 + 22
☀	Կոտայքի լեռներ	0 + 3 + 9 + 13	☀	Արմավիր	+ 4 + 8 +19 + 21
☀	Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 +13 + 16	☀	Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 + 9 + 12
☀	Գեղարքունիք	0 + 3 + 9 + 12	☀	Վայոց ձորի նախալեռներ	0 - 3 + 9 + 12
☀	Լոռի	- 4 + 1 +14 + 17	☀	Սյունիքի հովիտներ	+ 5 + 7 +19 + 21
☀	Տավուշ	0 + 5 +16 + 20	☀	Սյունիքի նախալեռներ	- 1 + 2 +13 + 16
☀	Արագածոտնի լեռներ	- 1 - 3 + 9 + 12	☀	Արցախ	+ 5 + 9 +17 + 21
☀	Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 5 +13 + 18	☀	Երեւան	+ 4 + 7 +18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 3.5.2023

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ
չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային
հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս
կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել
հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք
կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: